Ռուս հետազոտողները Հայաստանում (1850-1920-ական թթ.)[1]

Ծերետյան Կարեն Ռ.
Գիտաշխատող,
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» Պետական ոչ առևտրային կազմակերպություն;
ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի «Փորձաքննությունների ազգային բյուրո» Պետական ոչ առևտրային կազմակերպություն (Երևան, ՀՀ)
https://orcid.org/0009-0006-1799-2597
terkarvos@mail.ru

ՀՏԴ՝ 902(479.25); **EDN:** IYWLUM
DOI: 10.58587/18292437-2026.5-176
Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝ Հայաստան, հնագիտական պեղումներ, բերդշեն, ֆալլոս, ռուս մասնագետներ, սեպագիր արձանագրություն, դրամներ, վիմական արձանագրություն

Российские исследователи в Армении (1850–1920-е гг.)

Церетян Карен В.
научный сотрудник
Некоммерческая организация «Научно-исследовательский центр историко-культурного наследия» Министерства образования, науки, культуры и спорта РА;
Государственная некоммерческая организация «Национальное бюро экспертиз» Национальной академии наук РА (Ереван, РА)

Аннотация. Археологическая деятельность российских исследователей в Армении берет свое начало в середине XIX века. Их вклад, в частности А. А. Ивановского, М. В. Никольского, Н. Я. Марра и других исследователей-первопроходцев, наряду с Императорской археологической комиссией, имел определяющее и ключевое значение для зарождения и развития армянской археологии. Несмотря на то, что многие исследователи XIX века были далеки от профессиональной археологии и зачастую совершали методологические ошибки при раскопках и датировке памятников, значение проделанной ими работы тем не менее остается фундаментальным.
Ключевые слова и словосочетания: Армения, археологические раскопки, бердшен (циклопическое городище), фаллос, российские специалисты, клинописная надпись, монеты, лапидарная надпись

Russian Researchers in Armenia (1850s–1920s)

Tseretyan Karen V.
scientific worker,
“Research Centre for Historical and Cultural Heritage” State Non-Commercial Organization Ministry of Education, Science, Culture and Sport of the Republic of Armenia;
“National Bureau of Expertise” State Non-Commercial Organization NAS RA (Yerevan, RA)

Abstract. The archaeological activity of Russian researchers in Armenia commenced in the mid-19th century. Their contribution, particularly that of A. Ivanovsky, M. Nikolsky, N. Marr, and other pioneer researchers, alongside the Imperial Archaeological Commission of Russia, was crucial and significant to the inception and development of Armenian archaeology. Albeit many 19th-century researchers were far removed from professional archaeology and frequently excavated and dated monuments incorrectly, the significance of the work undertaken remains nevertheless profound.
Keywords & phrases: Armenia, archaeological excavations, *berdshen* (cyclopean fortress-settlement), phallus, Russian specialists, cuneiform inscription, coins, lapidary inscription

[1] Սույն հոդվածը պատրաստելու գործում ինձ ցուցաբերած արժեքավոր աջակցության համար խորին շնորհակալությունս եմ հայտնում ՀՀ ԿԳՄՍ նախարարության «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ի Հնագիտական հետազոտության բաժնի պետ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, պատմական գիտությունների թեկնածու Հակոբ Սիմոնյանին, հայկական հուշարձանների համահավաքի բաժանմունքի նախկին ղեկավար, ճարտարապետության թեկնածու Կորյուն Ղաֆադարյանին և գիտատեղեկատու բաժնի պետ Հասմիկ Կարապետյանին:

Հայ ժողովուրդը և Հայաստանը բազմադարյա պատմությամբ և պատմամշակութային հուշարձաններով մշտապես գրավել է օտարերկրացիների ուշադրությունը: Դրանով է պայմանավորված դեռևս XIII դ. առաջին օտարերկրացիների, հիմնականում՝ եվրոպացիների այցելությունները մեր երկիր: Եվրոպացիներից զատ, Հայաստանի հնագիտության սկզբնավորման և զարգացման գործում իրենց ավանդը ներդրեցին նաև ռուս գիտնականները: Նրանք Հայաստանում հայտնվել են XIX դ. առաջին քառորդին, երբ Արևելյան Հայաստանը գրավվեց Պարսկաստանից և միացվեց ռուսական կայսրությանը: Դրանով է պայմանավորված այն, որ ի տարբերություն Արևմտյան Հայաստանի, որտեղ հնագիտական ուսումնասիրություններ էին կատարում հիմնականում՝ եվրոպացի մասնագետները, Արևելյան Հայաստանում հետազոտություններով զբաղվում էին ռուս մասնագետները: Ռուս հնախույզ-գիտնականների գործունեության համար կարևոր էր և Պետերբուրգի Կայսերական հնագիտական հանձնաժողովի և Մոսկվայի հնագիտական ընկերության ներդրումը (նկ. 1, 2), որոնք իրենց հետազոտողներին գործուղում էին Հայաստան: Սկսած XIX դ. կեսերից, հնագիտական հետազոտությունները ընդգրկեցին Հայկական լեռնաշխարհի ողջ տարածքը:



Նկ. 1, 2. *Կայսերական հնագիտական հանձնաժողովի պարբերականը և տիտղոսաթերթը*

Մեծ է ռուսների ավանդը հայագիտության ճյուղեր վիմագրագիտության և դրամագիտության բնագավառներում [**1**, էջեր 86-110]: XIX դ. Վանի թագավորության (Ուրարտու) պատմությունն ու մշակույթը մեծ հետաքրքրություն առաջացրեց ոչ միայն եվրոպացի, այլև ռուս հետազոտողների շրջանում: Նրանք հավաքել, դասակարգել և վերծանել են բազմաթիվ սեպագրեր: 1893 թ. Մոսկվայի Կայսերական հնագիտական ընկերությունը Ա. Իվանովսկուն և Մ. Նիկոլսկուն գործուղեց Հայաստան: Նրանք հաջողությամբ կատարեցին իրենց վրա դրված առաջադրանքը, որի արդյունքը Մոսկվայում, 1896 թ. Մ. Նիկոլսկու «Клинообразные надписи Закавказья» աշխատության հրատարակումն էր: 1893 թ. Ա. Իվանովսկին՝ Խ. Հովհաննիսյանի հետ համատեղ, հետազոտեցին Երևանի (հատկապես՝ Սևանա լճի ավազանը, Արաքսի հովիտը) և Ելիզավետպոլի նահանգները (նկ. 3): Ա. Իվանովսկին ուսումնասիրեց նաև Կարսի մարզը, հնագիտական պեղումներ իրականացրեց Սևանա լճի հարավային ավազանում: Արդյունքում հայտնաբերվեց Վանի թագավորության բազում սեպագիր արձանագրություններ:

Ուրարտական արձանագրությունները խթան հանդիսացան նաև հնագիտական պեղումների համար: Վառ օրինակը՝ 1869 թ. Արմավիր քաղաքատեղին զբաղեցնող բլրի ստորոտին հայտնաբերված Վանի թագավորության առաջին սեպագիր արձանագրությունն է, որը հիմք հանդիսացավ կոմս Ա. Ուվարովի պեղումներին Արմավիրում, 1880 թ.:

Նկ. 3. *Ելիզավետպոլի նահանգի քարտեզը (XIX դ.)*

Պարունակած տեղեկություններով առանձնանում են նաև հունարեն արձանագրությունները: Դարասկզբին Բաշ-Ապարանում (այժմ՝ Ապարան քաղաք) Գ. Հովսեփյանի հայտնաբերած հունարեն արձանագրությունն ուսումնասիրել է վերծանել պրոֆեսոր Ն. Մառը, որը վերծանել է նաև պետերբուրգցի լեզվաբան Ն. Սկվորցովը: Հետագա (խորհրդային ժամանակաշրջան) ուսումնասիրությունները պարզել են, որ մոտակա ամրոցի տարածքում գտնվող Գնթունիների ապարանքի կամ դղյակի շինաքարերին փորագրված հիշյալ արձանագրությունը հիշատակում է ոչ թե հայոց Արշակունի Տրդատ Բ (216-252 թթ.) արքային, որը Նիգ անունով կալվածքը շնորհել է Գնթունիների տոհմին [**2**, էջեր 113-114]:

1907 թ. Մոսկվայի Կայսերական հնագիտական ընկերությունը Վ. Սիսոևին գործուղեց Երևանի նահանգ՝ վանքերն ու եկեղեցիները ուսումնասիրելու նպատակով: Արշավախմբում ընգրկված էին լուսանկարիչ Մ. Դաղյանցը և Ստրոգանովյան վարժարանի սան, ճարտարա-

պետ Տարագրոս Տեր-Վարդանյանը: Նրանք առաջին տարում ուսումնասիրեցին Աղջոցի Սբ Ստեփանոսը, Այրիվանքը (Գեղարդավանք), Հավուց-թառի Ամենափրկիչը և այլն [**3**, էջեր 1-37]:

Հաջորդ տարում արշավախումբն ուղղվեց ներկայիս Վայոց ձորի մարզի (նախկին՝ Շարուր-Դարալագյազ) Արփա գետի հովիտ, ուսումնասիրեց Խոշավանքն ու Նորավանքը: Շուրջ երկամյա հետազոտություններն արգասաբեր էին, հավաքված նյութը՝ հսկայական. 400 լուսանկար, 500 վիմական արձանագրություն, բազմաթիվ եկեղեցիների չափագրություններ և այլն: Վիմագրերի վերծանությունը հանձնարարվեց Լազարյան ճեմարանի պրոֆեսոր Հովհաննես Քյուչուկ-Հովհաննիսյանին:

Ավելի ուշ՝ 1913 թ. Ն. Մառի ռուսերեն առաջաբանով Սանկտ-Պետերբուրգում տպագրվեց ականավոր հայագետ Կ. Կոստանյանցի «Վիմական տարեգիրը», ուր ամփոփված են 1328 վիմական արձանագրություններ, այդ թվում նաև Սանահնի վիմագրերը [**4**, էջ 72]:

XIX դ. կեսերից սկիզբ առած հավաքչական աշխատանքներում ներգրավված ռուսները մեծ գործ կատարեցին նաև հայկական և օտար ծագմամբ դրամների հավաքման, դասակարգման և ուսումնասիրման բնագավառում:

1850 թ. Ռուսաստանի Հնագիտական ընկերությունն, այլ հնությունների հետ մեկտեղ, հրատարակեց նաև հայոց Արտավազդ Բ (Ք. ա. 56-34 թթ.) արքայի արծաթե դրամը (նկ. 4), որի դիմերեսին տիրակալի պատկերն է, դարձերեսին՝ քառաձի մարտակառք [**5**, էջեր 1-2]:

Նկ. 4. *Արտավազդ Բ արքայի դրամը*

Հայկական դրամների ուսումնասիրության գործում ուրույն տեղ ունի Ն. Մառը:

1899 թ. նա Հնաբերդ և Վերին Արտաշատ (Արդաշար) գյուղերի միջև՝ «Բերդ» կոչվող վայրում (Դվին հնավայրի տարածք), պեղումների ժամանակ գտել է երկու դրամ [**6**, էջ 91]: Բացի այդ, Ն. Մառը տեղացիներից գնել է 29 դրամ, որոնցից 22-ը՝ արաբական, մնացածը՝ հռոմեական, վրացական և հայկական: Անիի պեղումների ընթացքում նույնպես գտնված տարբեր դրամների դասակարգման և թվագրման առաջին փորձերը կատարել է անվանի կովկասագետը:

Ուրարտական գեմմաների ուսումնասիրման գործում անուրանալի է Մ. Նիկոլսկու ավանդը: Վերջինս հետազոտել է Հայկավան գյուղից (Արմավիր քաղաքատեղին զբաղեցնող բլրի շրջակայք) գտած և իրեն նվիրած ամբողջովին ուրարտական սեպագրերով ծածկված և 1,7 սմ տրամագծով գեմման, որը նմանություն ունի ասորական օրինակներին: Մանրազնին ուսումնասիրելով գտածոն, Մ. Նիկոլսկին եզրահանգել է, որ արձանագրությունը հիշատակում է Վանի արքա Մենուայի անունը («MENUAŠE») [**7**, էջ 133]:

Ուրարտական սեպագրերի, օտար և հայկական վիմական արձանագրությունների, դրամների հավաքման, ինչպես նաև հնագիտական պեղումներից հայտնաբերված մեծ թվով գտածոները պահելու, ցուցադրելու համար անհրաժեշտություն էր առաջացել հիմնել թանգարան: Անդրկովկասում հիմնադրված առաջին թանգարաններում պահվում և ցուցադրվում էին տարածաշրջանից հայտնաբերված հնագիտական և ազգագրական իրեր:

1856 թ. Թիֆլիսում հիմնադրվեց Կովկասյան թանգարանը, որն ուներ նաև հնագիտության բաժին: Կովկասում թանգարան հիմնելու հարցը արծարծվել է դեռևս 1840-ական թթ.՝ Կովկասի փոխարքա Միխայիլ Վորոնցովի (1844-1854) պաշտոնավարության ժամանակ: Թանգարանը մեծապես նպաստել է Այսրկովկասի, մասնավորապես՝ Հայաստանի հնագիտության զարգացմանը: Ընտրվում է թանգարանի տնօրինության կազմը՝ Վ. Սոլոգուբ, Կ. Չերմակ՝ Ե. Անդրեևսկու նախագահությամբ [**8**, էջ 10]: 1872 թ., կրկին Թիֆլիսում, Ս. Տրուբեցկոյի և Ս. Տալիզինի ջանքերով ստեղծվեց Կովկասի՝ հնագիտությունը սիրողների ընկերություն, որին անդամագրվել են Ա. Երիցյանը, Դ. Բագրաձեն, Ֆ. Բայերնը, Ա. Բերժեն, Յա. Սմիռնովը, Գ. Ռադդեն և այլք:

Նկ. 5, 6. *Գ. Ռադդեն, Գ. Սիվերսը*

Թանգարանային գործից զատ, իրականացվում էին նաև դաշտային հետազոտություններ: 1871 թ. Գ. Ռադդեի և Գ. Սիվերսի (նկ. 5, 6) ղեկավարությամբ Կովկասյան թանգարանի արշավախումբը հետազոտական աշխատանքներ իրականացրեց Արաքս գետի միջին հոսանքի

շրջանում, Երևանում, Նախիջևանում, Մեղրիի հովտում, Կապուտջուղ լեռան վրա, Արցախ-Սյունիքում, Վայոց ձորում (Դարալագյազ), ուսումնասիրել Ջերմուկի (Իստի-սու) հանքային տաք աղբյուրները, Գավառում (Նոր Բայազետ), Ծովագյուղում (Չիբուխլու), Ծաղկաձորում (Դարաչիչակ), այնուհետև Էջմիածնում, Եփրատի ձախ ափին՝ Ույ-քիլիսա վանքում: 1874 թ. արշավախումբը հասել է Բարձր Հայք՝ մինչև Էրզրում և բարձրացել Բյուրակնի (Քինգյոլ) լեռները: Արդյունքում, հարստացվեցին Կովկասյան թանգարանի ֆոնդերը, որոնք հետագայում դարձան առանձին գիտնականների հետազոտման առարկաներ:

1870-ական թթ. հնագիտական հետազոտությունները թևակոխեցին նոր փուլ, երբ Ռուսաստանում մեկը մյուսի ետևից տեղի էին ունենում հնագիտական հանձնաժողովների նիստեր: 1876 թ. Պետերբուրգում տեղի ունեցած Արևելագետների միջազգային ժողովում, հայազգի գիտնական Ք. Պատկանյանի նախագահությամբ մի առանձին նիստ նվիրվել է Հայաստանին ու Վրաստանին: 1877 թ. կոմս Ա. Ուվարովի նախագահությամբ կայացավ Ռուսաստանի հնագիտական IV ժողովը, որտեղ բազմաթիվ հարցերի հետ միասին, քննարկվում էր նաև հաջորդ նիստի անցկացման տեղի և ժամանակի հարցը. հնագիտական V ժողովը պետք է տեղի ունենար 1880 թ., Թիֆլիսում, սակայն ռուս-թուրքական (1877-1878 թթ.) վերահաս պատերազմի հետևանքով այն կայացավ միայն 1881 թ. սեպտեմբերին [**9**, էջ 76], որը շրջադարձային էր հայ հնագիտության համար, քանզի դրանով սկսվեցին լայնածավալ հետազոտությունները Հայաստանում [**10**, էջեր 127-138]:

Մինչ այդ, տեղի ունեցան մի քանի ժողովներ: 1878 թ. մարտի 7-ին կոմս Ա. Ուվարովը Մոսկվայում ստեղծեց հանձնաժողով, որի 1-ին նիստում ելույթներ ունեցան Պետերբուրգի Ակադեմիայի անդամ Մարի Ֆելիսիտե Բրոսսեն, Օդեսայում անգլիական հյուպատոս Օ. Բլաուն և Թիֆլիսի թանգարանի վերատեսուչ, դոկտոր Գ. Ռադդեն: Հանձնաժողովի նախագահ Ա. Ուվարովն առաջարկեց ուսումնասիրել Հայաստանի ու Վրաստանի հնությունները, հատկապես՝ Վան և Ուրմիա լճերի շրջակայքերում հայտնաբերված սեպագիր արձանագրությունները: Նախաձեռնությունն ստանձնեց Վ. Միլլերը:

1878 թ. ապրիլի 25-ին հանձնաժողովի 2-րդ նիստին հայ գիտնականները բացակայում էին: Ձեկուցող բնագետ Ի. Չեռնյավսկին խոսեց Աբխազիայում՝ Պիցունդայի լեռներում հայտնաբերված հայկական վանքի, այստեղ պահպանված մատենագրերի մասին: 1879 թ. մարտի 13-ին կայացած 3-րդ նիստը, որին արդեն մասնակցում էր հայազգի գիտնական Մկրտիչ Էմինը: Ա. Ուվարովը խոսելով Հայաստանի քրանձավների ուսումնասիրության անհրաժեշտության մասին, այն հանձնարարեց Ի. Պոլյակովին [**9**, էջ 80]: Կարևորելով Կովկասում հայտնաբերված արձանագրությունների պատմական նշանակությունը, որոշվեց հավաքել ու տպագրել մինչև XIII դ. բոլոր՝ Վանի թագավորության սեպագիր, ինչպես նաև հայերեն, վրացերեն, հունարեն և արաբերեն վիմական արձանագրությունները: Հարցը քննարկվեց նաև նույն թվականի ապրիլի 12-ի նիստին, որին մասնակից Մ. Էմինն անդրադարձավ Սանահնի, Օձունի, Հառիճի և Մարմաշենի վանքերին, նշեց Սարգիս վարդապետ Ջալալյանցի տպագրած Սանահնի, Հաղբատի, Գանձասարի և այլ վանքերի 384 վիմական արձանագրության մասին:

1879 թ. Ա. Ուվարովը Թիֆլիսում կազմավորեց հանձնաժողով, որի երկու նիստերի խորհրդակցության թեման Հայաստանի քարանձավներն էին: Նշվեց, որ միայն Լոռու գավառում հաշվվում է շուրջ 96 քարայր, որոնցից մեկում, դեռևս 1820-ական թվականներին, գտնվել էին եկեղեցական զգեստներ, զենքեր, դրամներ, պղնձե անոթներ:

Վերջապես, 1881 թ. սեպտեմբերին Թիֆլիսում կայացավ Համառուսաստանյան հնագիտական V ժողովը, որի կազմում ընդգրկված էին կոմս Ա. Ուվարովը, Ա. Երիցյանն ու Ի. Պոլյակովը: Ժողովը բեկումնային էր հայ հնագիտության համար, քանզի քննարկվում էր Այսրկովկասի լայնածավալ հնագիտական ուսումնասիրության հարցը: Չնայած՝ նախագահությունն ու մասնակիցները քաջ գիտակցում էին, որ դրա համար չկան համապատասխան մասնագետներ, սակայն խնդիր էր դրված իրականացնել հնագիտական պեղումներ:

Հայաստանի հնագիտության մեջ իրենց գործունեությամբ աչքի ընկան կոմս և կոմսուհի Ուվարով ամուսինները (նկ. 7, 8): 1880 թ. աշնանը նրանք մեծ եռանդով ձեռնարկեցին որոնումները Արմավիրում (նկ. 9): Մինչ այդ, 1879 թ. քաղաքատեղիում հնագիտական աշխատանքներ էր իրականացրել Ա. Երիցյանը:

Նկ. 7, 8. *Կոմս Ա. Ուվարով, Կոմսուհի Պ. Ուվարովա*

Մեկ շաբաթյա պեղումների արդյունքում Ուվարովները գտան Վանի՝ Արգիշտի Ա (Ք. ա.

786-764 թթ.), Սարդուր Բ (Ք. ա. 764-735 թթ.) և Ռուսա Բ (Ք. ա. 685-645 թթ.) արքաների սեպագիր արձանագրությունները, որոնցում, ըստ XIX դ. հետազոտողների վերծանության՝ վայրը կոչվում էր Արգիշտիխինիլի: Մինչդեռ Ա. Ուվարովը կարծում էր, որ այն Արմավիրը չէ, իսկ հիշյալ արձանագիր քարերը՝ բերված են այլ վայրից: Սակայն, XIX դ. հնագետ Խ. Հովհաննիսյանը, հակադրվելով այս տեսակետին, իրավացիորեն ենթադրել է, որ սեպագրերի քառակուսի սալերն ուրարտական ճարտարապետության արգասիքն են (Ք. ա. IX-VIII դդ.), որոնք ունեին շինության պատերին ամրացնելու համար նախատեսված փոսեր: Ուստի, ուրարտերեն սեպագրերի Արգիշտիխինիլին (նկ. 10) և Պատմահայր Մովսես Խորենացու հիշատակած Արմավիրը միևնույն քաղաքն է [**11**, էջ 203]:

Նկ. 9. *Արմավիր քաղաքատեղի*

Նկ. 10. *Արգիշտիխինիլի քաղաքատեղի*

Ա. Երիցյանի և Ա. Ուվարովի պեղումներով բացվեցին ուրարտական ժամանակաշրջանի պատ, քառանկյուն հատակագծով կացարանների հիմքեր, գտնվեցին միջնադարյան օջախներ, խեցեղեն և այլն: Բացի բուն քաղաքից, մերձակա բլրի հյուսիսային, հարավային և արևելյան ստորոտներին նրանք պեղել են նաև դամբարաններ: Հայտնաբերված տարատեսակ գտածոները փոխադրվեցին Թիֆլիսի Կովկասագիտական թանգարան, որոնք հետագայում՝ 60 տարի անց ուսումնասիրեց հնագետ Բ. Կուֆտինը [**12**, էջ 26]:

Ուվարով ամուսինները հետազոտեցին նաև Արագած լեռան հարավ-արևելյան լանջի հնավայրերում: Դրանցից հնագույնը Օշական գյուղի «Գեդառ» (Գետառ) կամ տեղացիների՝ «Օղուզի քեալաֆեք» կոչվող հուշարձանի գիտական առաջին լուրջ ուսումնասիրությունը կոմսուհի Պ. Ուվարովայինն է. դրանք բնորոշում էր որպես՝ *«նախնադարյան»*: Տիկինն Օշականում բացել է շուրջ 30 տան հիմքեր [**13**, էջ 92]՝ նման Աշտարակ գյուղի (այժմ՝ Աշտարակ քաղաք) «Ուլատիտիկ» կոչվող բարձրավանդակի՝ չափերով մեծ և կլոր կացարաններին, հետազոտել է Ապարանի մի քանի բերդշեն՝ Վարդենուտ (Ճիրաղալա), Նիգատուն (Ղալաչի) գյուղերում և այլուր: Ուշագրավ են Արագածի հարավ-արևելյան լանջին նրա ուսումնասիրած կոթողը (փալլոս)՝ շրջագծված քարե կլոր շրջանակով (խոսքը դամբարանի մասին է, կրոմլեխ) և որս ու կենդանիներ (եղջերու, շուն) պատկերող խորաքանդակը [**13**, էջ 95]:

Արշավախմբի աշխատանքները քննարկելու նպատակով, 1901 թ. կոմսուհու տանը և նրա նախագահությամբ տեղի ունեցավ Մոսկվայի Կայսերական հնագիտական ընկերության նիստը, որտեղ Պետերբուրգից հրավիրված Կայսերական Էրմիտաժի կառավարիչ Յա. Սմիռնովը հանդես եկավ Գառնիի տաճարին նվիրված զեկուցումով: Ըստ վերջինիս տեսակետի՝ հիմք ընդունելով հունա-հռոմեական ճարտարապետական ոճը, տաճարը կառուցվել է ոչ թե IV դ.՝ ինչպես հաղորդում է Պատմահայրը, այլ III դ.: Բացի այդ, Յա. Սմիռնովը ներկայացրեց տաճարի հատակագիծը, ըստ որի՝ դրա մի կողմն ու ճակատն ունեին 6-ական սյուն և 9 աստիճան՝ ճիշտ այնպես, ինչպես 1834 թ. վերականգնել էր հայտնի ճանապարհորդ Ֆ. Դյուբուա դը Մոնտպերեն [**14**, էջ 1]:

XIX դ. 90-ական թվականներին արդյունավետ էին նաև Մ. Նիկոլսկու և Ա. Իվանովսկու պեղումները: 1893 թ. Մոսկվայի Կայսերական հնագիտական ընկերությունը նրանց գործուղեց մեր երկիր: Նրանք հաջողությամբ կատարեցին իրենց վրա դրված ծանր ու պատասխանատու առաջադրանքը՝ կարճ ժամանակահատվածում ներկայացնելով իրենց որոնումների արդյունքները: Ռուս հնագետները հիմնականում զբաղվեցին Վանի թագավորության սեպագրերով: Արաքսի ափին Մ. Նիկոլսկու պեղածը 60X25 մ չափերով ամրոցն է, բացել կարասներ, որոնք, ըստ նրա՝ նման են XIX դ. հայերի գործածած կարասներին [**15**, էջ 37]: Գրեթե նմանօրինակ, կարասներով մեկ այլ շինություն էլ նա պեղել է նաև Վանում՝ Մենուա (Ք. ա. 810-786 թթ.) արքայի հայտնի սեպագիր արձանագրության գտնված վայրում [**15**, էջ 38]:

Մ. Նիկոլսկին և Ա. Իվանովսկին հետագա տարիներին ուսումնասիրություններ են կատարել Երևանի, Բայազետի, Կարսի և Ելիզավետպոլի (Շամխորի շրջան) նահանգներում: Երևանի նահանգում՝ Ա. Իվանովսկու իրականացրած հնագիտական պեղումների և հետազոտություններին է անդրադարձել Ա. Լայստերը մի փոքրիկ հոդվածով («Археологическія изследованія А. А. Ивановскаго въ Эриванскаго губернскаго правленія», 1914 г., стр. 1-10): Այստեղ ներկայացված է ռուս հնագետի Երևանի նահանգում՝ Սևանա լճի ավազանում, Արարատյան դաշտավայրում, Արաքսի հովտում 1911 թ. իրականացրած աշխատանքների ընդհանուր պատկերը և «Կովկասի հնագիտական նյութեր» հանդեսի VI համարում լույս տեսած հոդվածի համառոտ նկարագրությունը:

1896 թ. Մ. Նիկոլսկին Ելիզավետպոլի նահանգում պեղում է տեղի դամբարանները: Հնագետն աշխատանքները կենտրոնացրել է հիմնականում Գետաբեկ, Կարամուրադ, Կարաբուլաղ (Ջեբրայիլի շրջանի Ակնաղբյուր գյուղ) և Ղալաքենդ (հնում դրա տեղում էր Գարդման կամ Փառիսոս բերդը) բնակավայրերում՝ պեղելով 72 դամբանաթումբ [**15**, էջ 86]: Հնագիտական նյութը բազմատեսակ և բազմազան էր՝ ծարիրից պատրաստված գոտիներ, կախիկներ, ձիասարքեր, բրոնզե դաշույններ, դանակներ, ապարանջաններ, արձանիկներ, նետասլաքներ, սերդոլիկե ուլունքներ, սև փայլեցրած մակերեսով սափորներ, ափսեներ, բաժակներ և այլն [**15**, էջեր 90-99; **16**, էջ 156]: Մ. Նիկոլսկին զուգահեռներ է անցկացնելով, վերոնշյալ իրերը համեմատել է այլ վայրերի գտածոների հետ: Այսպես, ըստ նրա՝ կովի կամ ցլի բրոնզե արձանիկները (հայտնաբերել է Է. Ռյոսլերը՝ 1893 թ., Արջաձորի դամբարանից) և պատկերները հանդիպում են Ժ. Մենանտի ուսումնասիրած ասորական կնիքների և փյունիկյան արվեստի գործերի վրա, ինչը համընկնում է արևելագետ Է. Բաբելոնի կարծիքին [**15**, էջ 135]:

Նույն ժամանակահատվածում Արցախի տարածքում հետազոտություններ էր կատարում նաև Ա. Իվանովսկին: 1896 թ. ամռանը նա պեղումներ սկսեց Գանձակի, Շուշիի և Ջեբրայիլի գավառներում: Ակնաղբյուր (Կարաբուլաղ) գյուղում ձեռնարկեց մի քանի դամբարանի

պեղումներ՝ մասնակից դարձնելով արշավախմբի անդամ Ե. Համամչյանին: Համաձայն նրա նկարագրության՝ Քյոնդալան (Դողագետ, Տողագետ, Վարանդա գետ Փիզուլիում) գետի ափերի ընդարձակ հարթավայրերում փաստագրել է բազմաթիվ դամբանաբլուրներ:

Ելիզավետպոլի նահանգում հնագիտական աշխատանքներով աչքի ընկավ նաև Ա. Բոբրինսկին (նկ. 11): 1891 թ. Պետերբուրգի Կայսերական հնագիտական հանձնաժողովը նրան գործուղեց Հայաստան: Նա հետազոտություններ իրականացրեց Ելիզավետպոլի նահանգում, մասնավորապես՝ Դիլիջանում: Վերջինը հայտնի էր հնավայրերով, հատկապես՝ «Ռեդկին լագերը», որտեղ պեղումներ էին կատարել ռուս և եվրոպացի մի շարք հետազոտողներ ու հնագետներ: Ա. Բոբրինսկին հետազոտեց հիմնականում Աղստև (Աղստաֆա) գետի ավազան [**17**, էջ 117]: Լեռան ողջ լանջը հարուստ էր դամբարաններով, որոնց մեծ մասի դամբանախցերն, ըստ Ա. Բոբրինսկու հաշվետվությունների՝ քարարկղեր էին: Դրանցից մի քանիսի վերին սալերը նույնիսկ նշմարել էին գետնի երեսին: Ծատ դամբարաններ կողոպտված էին: Ա. Բոբրինսկու պեղած 12 դամբարաններից մեկում բացված մարդու կմախքը նստած վիճակում էր: Բացի մարդկայինից, գտնվել են նաև կենդանիների՝ ձիու կամ կովի և հավի ոսկորներ (ըստ՝ Ա. Բոբրինսկու): Հարուստ էր բրոնզե մատանիների, ապարանջանների, շղթաների, ասեղների (դրանցից երկուսն անագից էին), մեդալիոնների, խաչանման զարդերի տեսականին, բազմաթիվ՝ խեցեղենի բեկորները [**17**, էջ 118]:



Նկ. 11. *Ա. Բոբրինսկի*

Հնագիտական հետազոտություններով աչքի ընկած Վ. Վիոուբովի, Պ. Պետրովի, Պ. Չարկովսկու, վրացի հնագետ Ե. Թաղայշվիլիի, Հ. Օրբելու և այլոց ուսումնասիրություններն ուրույն տեղ ունեն XIX դարավերջի և XX դարասկզբի՝ Հայաստանի հնագիտության սկզբնավորման և հետագա զարգացման գործընթացում:

1895 թ. Արաքս գետի ափին՝ «Կարմիրվանք» («Ղըզըլ-վանք») կոչված վայրում, պեղումներ է կատարել սահմանապահ զորքերի սպա Ն. Ֆեդորովը: Գտնված բրոնզե 4 դաշույնը և ոսկե օղակը [**18**, էջ 48] նա ուղարկել էր Հնագիտական հանձնաժողովին: Դրանցից ուշագրավը եռանկյունիներով և ռոմբերով հարդարված, բազմերանգ, գունազարդ կավանոթն է [**19**, էջ 13]: Հնագիտական նյութի հետագա ուսումնասիրությունը ցույց է տվել, որ դրանք վերաբերում են գիտական գրականության մեջ հայտնի «Կարմիրվանքյան» մշակույթին (բրոնզի դարաշրջանի վաղ փուլ, Ք. ա. XVIII-XVI դդ.):

Համաժամանակյա «Կարմիրբերդյան» կոչվող մշակույթն առաջինը հայտնաբերել է Պ. Չարկովսկին՝ 1896 թ. Զանգու (Հրազդան) գետի աջ ափին, «Կարմիր բերդ» (Թազաքենդ կամ «Ղըզըլ-ղալա») ամրոցին հարակից ընդարձակ դամբարանադաշտում՝ պեղելով 22 դամբարան: Հայտնաբերված 350 հնագիտական իրերը՝ բրոնզե մատանիներ, գոտիներ, ապարանջաններ, ճարմանդներ և այլն, նա ուղարկել է Կովկասյան թանգարան: Մի քանի տարի անց դամբարանադաշտում պեղումներ են կատարել մի շարք ուսումնասիրողներ. 1903 թ. Մոսկվայի հնագիտական ընկերությունը հետագա պեղումները շարունակելու նպատակով, այն հանձնարարել է նույն ընկերության անդամ Մ. Սմբատյանցին: Վերջինս իր հերթին հետազոտությունները հանձնարարում է Մ. Զաքարյանին: Սակայն հնագիտությունից հեռու հիշյալ անձը Կարմիր բերդում պեղել է 17 թաղում (դամբարան)՝ հայտնաբերված նյութերը ուղարկվելով Հնագիտական հանձնաժողովին: Մ. Զաքարյանի կատարած աշխատանքները ստուգելու համար, այդտեղ է գործուղվում գերմանացի հնագետ Է. Ռյոսլերը: Պեղելով 28 դամբարան, նա հիշատակում է դրանց թալանվածության մասին: Ցավոք՝ Է. Ռյոսլերի հաշվետվությունները պարունակում են կցկտուր տեղեկություններ հնագիտական պեղումների և դամբարանների վերաբերյալ [**20**, էջ 30]: Հայտնաբերված կավանոթները, հիմնականում ցածր վզիկով բաժակներ և սափորներ են, որոնց՝ կարմիր երանգով մակերեսները հարդարված են սև գծազարդերով: Մեծ թիվ է կազմում նաև գունազարդ խեցեղենը: Կան անկանթ, լայնաբերան կճուճներ՝ կարմիր փայլեցրած մակերեսով: Տարբեր են նաև դրանց հարդարումը և զարդամոտիվները. ռոմբեր, զուգահեռ գծազարդեր, եռանկյուններ, շախմատաձև և խաչաձև զարդանախշեր [**20,** էջ 31]:

1897 թ. Վ. Վիոուբովը Երևանի նահանգում գտել էր բրոնզե 4 կացին, քարից 5 մուրճ, Անիում

պատահաբար բացված ստորգետնյա գետնուղուց՝ եկեղեցու երկու փոքր կրկնօրինակ՝ երկնագույն ջնարակով [**21,** էջ 83]:

XX դարասկիզբը ևս նշանավորվեց հնագիտական մի շարք հայտնագործություններով: Նշանավորը՝ 1914 թ. Պ. Պետրովի գտածոներն էին Իգդիրի Մալաքլու գյուղում: Գտածոներն աղքատ էին, սակայն կարևոր այն առումով, որ դրանք, հատկապես՝ խեցեղենը, զուգահեռներ ուներ Շենգավթյան մշակույթի հետ (վաղ բրոնզի դար, Ք. ա. XXXV-XXIV/XXIII դդ.):

1894 թ. վրաց հնագետ Ե. Թաղայշվիլիի հետազոտություններն արդյունավետ են եղել Որնակում (այժմ՝ Ակներ). պեղել է 40 դամբարան (5-ը՝ քարարկղ) [**22,** էջեր 46-47]: Հայտնաբերել է բրոնզե սուր, կացին, նիզակի երկաթե ծայրակալներ, դանակներ, դաշույններ և կավամաններ: Հաղբատում պեղել է ուշ բրոնզ-վաղ երկաթեդարյան ժամանակաշրջանների 6 դամբարան, Դեբեդ գետի ավազանում ուսումնասիրել Յաղդան և Պրիվոլնիե գյուղերը (Լոռի): Գտածոների մեջ առանձնանում են ոսկրից, սերդոլիկից և բրոնզից պատրաստված ուլունքներն ու երկաթե իրերի մնացորդները, որոնք, ըստ Ե. Թաղայշվիլու՝ ժամանակակից են իր անվանակոչած «Որնակյան մշակույթին» (ժամանակագրորեն կապվում է Թռեղք-վանաձորյան մշակույթին, Ք. ա. XXII-XVIII դդ.):

Վրաց հնագետը պեղումներ է իրականացրել նաև Արևմտյան Հայաստանում (Վանի շրջան): Համաձայն նրա տեսակետի՝ Սակվաբիսագելե գետի մոտակայքի հուշարձանները ևս առնչվում են «հայկական մշակույթին» [**22,** էջ 51]:

Անվանի գիտնական, հայ հնագիտության հիմնադիր-հայրերից Հովսեփ Օրբելու (նկ. 12) գիտական ողջ կյանքը կապված էր ռուսական, այնուհետև խորհրդային գիտության հետ: Նրա հնագիտական գործունեությունը կապված է անվանի կովկասագետ, հայագետ, հնագետ Ն. Մառի անվան հետ՝ մասնակցելով վերջինիս կազմակերպած գրեթե բոլոր արշավախմբերին: Հ. Օրբելու գիտական դպրոցի դարբնոց հանդիսացավ Անիի պեղումները (նկ. 13): Տարաբնույթ հուշարձաններով հարուստ, միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Անիում ապագա անվանի գիտնականն ստացավ նեղ մասնագիտացում, հրապուրվեց վիմական արձանագրություններով և հրատարակեց «Անիի թանգարանի հնությունների կատալոգը»: Նա հատուկ զբաղվեց նաև գնդաձև իրանով, տարաչափ, գիտական գրականության մեջ «սնդկամաններ» անվանումով հայտնի կավանոթների ուսումնասիրությամբ. Անիից հայտնաբերված սնդկամանների թիվն անցնում է 600-ը:

Նկ. 12, 13. *Հնագետ Հ. Օրբելի; Նիկողայոս Մառը և Հովսեփ Օրբելին Անիում*

Նկ. 14. *Մարդու արձանի բեկոր (լուսանկարը՝ հնագետ Հակոբ Սիմոնյանի)*

1911-1912 թթ. ձմռանը Հովսեփ Օրբելին այցելեց Վանի շրջան (Ռոփրակ-կալե, Ռուսախինիլի): Նրա հայտնաբերած մարդու (նկ. 14) արձանի, ինչպես նաև ցլի և ծառի պատկերներով քանդակազարդ մարմարե բեկորները հիմք հանդիսացավ նոր հետազոտությունների համար: 1912 թ. Հ. Օրբելին ուղևորվեց Վանա լճի Ախթամար կղզի: Երկշաբաթյա ուսումնասիրությունների արդյունքը X դ. Գագիկ Արծրունու նախաձեռնությամբ կառուցված Ախթամարի եկեղեցու մասին նկարագրական բնույթի հաղորդումն է [**23,** էջ 100]: 1914 թ. սկսված Առաջին աշխարհամարտը խաթարեց աշխատանքները: Վիճակը փոխվեց 1916 թ., երբ ռուսական զորքերը ազատագրեցին Արևմտյան Հայաստանի մեծ մասը, Ն. Մառի արշավախմբում Հ. Օրբելին կրկին գործուղվեց Վան: Արշավախմբի կազմում էին Պ. Մակինցյանը, լուսանկարիչ Արամ Վրույրը, ճարտարապետ Ա. Կնյակինսկին, Հ. Աճեմյանը և այլք: Հ. Օրբելին այցելել և ուսումնասիրել է նաև Հայկաբերդը, արել հետաքրքիր դիտողություններ՝ ամրոցի կառուցապատման վերաբերյալ: Նա առաջինն է նկատել, որ շինարարության ժամանակ բարձունքի փեշերը հարթեցվել են, որի հետևանքով ամրոցի պարիսպները միաժամանակ կրել են նաև հենապատերի

նշանակություն: Նմանօրինակ դարավանդաձև հորինվածք նկատվում են ուրարտական համարյա բոլոր հուշարձաններում. Թեյշեբաինի, Արգիշտիխինիլի, Օշական [**24,** էջեր 102-103]: Տարածքից Հ. Օրբելու հայտնաբերած վերգետնյա իրերի հավաքածուն պահվում է Էրմիտաժի թանգարանում:

Հայ հնագիտության մեջ բացառիկ է ռուս անվանի հայագետ, լեզվաբան, հնագետ Նիկողայոս Մառի (նկ. 15) ներդրումը, ով հնագիտական գործունեությունը Հայաստանում սկսել է 1890-ական թվականներից [**25,** էջեր 143-152]:



Նկ. 15. *Նիկողայոս Մառ*

1892 թ. Մոսկվայի Հնագիտական հանձնաժողովի հանձնարարությամբ Ն. Մառը ձեռնարկեց լայնածավալ ուսումնասիրություններ Հայաստանի տարածքով մեկ: Նույն տարում նա պեղումներ սկսեց նաև Երվանդունիների մայրաքաղաք Արմավիրում: Մեկշաբաթյա ուսումնասիրություններով բացվեցին հելլենիստական (Ք. ա. IV-II դդ.) թաղումներ, հայտնաբերվեց փայտե դագաղի մասեր, ռելիեֆ զարդագոտիներով կավանոթներ, հեծյալների, մարդկանց ու կենդանիների պատկերներով խեցեղենի բեկորներ [**26,** էջ 84]:

Ուսումնասիրել է Արագած լեռան արևմտյան լանջի՝ Կառնուտի (Ք. ա. III հազարամյակի երկրորդ կես), Փանիկի (Ք. ա. II հազարամյակի կես), Պառնիգեղի (այժմ՝ Սպիտակի Մեծ Պարնի գյուղ, Ք. ա. II հազարամյակի երկրորդ կես), Սառնաղբյուրի (Ք. ա. XII-XI դդ.) բերդշեները, և Հաղբատ ու Սանահին վանքերի միջակայքի, Որնակի (այժմ՝ Ակներ) Ք. ա. XII-XI դդ. դամբարանադաշտը [**27,** էջեր 88-99]: Այդտեղ, դեռևս 1871 թ. Ալեքսանդր Երիցյանը պեղել էր Ք. ա. XI-VII դդ. բազմաթիվ դամբարաններ: Ն. Մառի հետազոտությունները հարստացրին հնագիտական նյութը:

Արշարունիք (հնում՝ Երասխաձոր) գավառում բացել է կառույցների հիմքեր, որոնք Երվանդյան արքայատոհմի վերջին ներկայացուցիչ Երվանդ Դ (Ք. ա. 220-201 թթ.) արքայի հիմնադրված Երվանդակերտ քաղաքատեղիում են, ուսումնասիրել Բագարանի տաճարի VII դ. հայերեն վիմական արձանագրությունը [**26,** էջ 84] և Երվանդաշատի Սբ Աստվածածին եկեղեցին՝ 1218-1299 թթ. վիմագրերով հանդերձ:

Ն. Մառը հետազոտություններ է կատարել նաև Վանաձորին (Մեծ Ղարաքիլիսա) մերձակա վաղ բրոնզեդարյան (Ք. ա. XXXV-XXIII դդ.) «Թագավորանիստ» կոչվող հնավայրում (նկ. 20): Հետախուզական պեղումներով՝ բլրի ստորոտին հայտնաբերել է գործիքներ, հետազոտել Վանաձորին մոտ «Փաշա-գեղ» («Փաշի գեղ») վաղ միջնադարյան (IV-VIII դդ.) գյուղատեղին [**26,** էջ 86]:

Նկ. 16. *«Թագավորանիստ» բնակատեղին զբաղեցնող բլրի ընդհանուր տեսքը*

Գիտնականն ուսումնասիրել է Վերին Թալինի (այժմ՝ Թալին քաղաք), Ներքին Թալինի (Դաշտադեմ), Թալիշի (Արուճ) և Կոշի միջնադարյան՝ XII-XIII դդ. հնությունները, վիմագրերը, ինչպես նաև Մաղասաբերդը (նկ. 21), Բորչալու գավառի (այժմ՝ Ստեփանավան) «Լոռի բերդ» քաղաքատեղին (նկ. 22). XI դ. Տաշիր-Զորագետի Կյուրիկյան թագավորության մայրաքաղաք Լոռէ բերդաքաղաքի պեղումները կարճատև են եղել: Հետազոտությունների աշխարհագրությունն ընդգրկել է նաև Նախիջևանն ու Բագրատունիների մայրաքաղաք Շիրակավանը [**28**, էջ 35]:

Նկ. 17. *Մաղասաբերդ*

Նկ. 18. *Լոռէ բերդաքաղաքը թռչնի թռիչքից (օդապատանկարը՝ հնագետ Հակոբ Սիմոնյանի)*

Անվանի գիտնականի հնագիտական գործունեությունում ուրույն են 1892 թ. սկսված Բագրատունյաց Հայաստանի մայրաքաղաք Անիի (նկ. 19) պեղումները՝ [**29,** էջեր 73-75] հիմնադրված Աշոտ Ա (885-890 թթ.) թագավորի կողմից:



Նկ. 19. *Անի քաղաքի պարիսպները (լուսանկարն ըստ՝ Նիկողայոս Մառի Անի գրքի)*

Լայնածավալ պեղումները վերսկսվեցին 1904 թ., երբ արդեն կազմվել էր արշավախումբ (նկ. 20, 21), որում ընդգրկված էին ճարտարապետներ Յա. Սմիռնովը (զբաղվում էր անտիկ և միջնադարյան ճարտարապետության ուսումնասիրությամբ), Փրանսիայից ժամանած Թ. Թորամանյանը, ուսանող Հ. Օրբելին, Ն. Ադոնցը, Տարագրոսը, Ա. Քալանթարը, նկարիչ Ս. Պոլտորացկին, 1911 թ.՝ նաև Ն. Տոկարսկին և Տ. Չուբինիշվիլին, լուսանկարիչ Արամ Վրույրը և որդին՝ Արտաշեսը: Անիում հնագիտական փորձ են ձեռք բերել Ն. Մառի որդիներ Վոլոդյան և իրանագետ Յուրին, որը նաև լուսանկարչական աշխատանքներ է կատարել: Արշավախմբի բժիշկն էր անվանի գիտնականի կինը՝ Ալեքսանդրա Մառը: Կարճատև, սակայն բեղմնավոր գործունեություն են ծավալել ճարտարապետներ Ա. Փեթվաճյանը (1907-1908 թթ.), Փ. Մոսևիչը (1908 թ.), Յա. Սմիռնովը (զբաղվում էր անտիկ և միջնադարյան ճարտարապետության ուսումնասիրությամբ, 1909 թ., 1913 թ.), Կ. Ռոմանովը (1910-1914 թթ.), Պ. Կնյակնինցկին (1912 թ., 1914 թ.), Վ. Բերիձեն (1912 թ.), Բ. Դանիչը (1914 թ.), Ն. Բունիաթյանը (1914-1915 թթ.), Ն. Տոկարսկին (1916 թ.), Տարագրոսը (1914-1917 թթ.), Դ. Ղիփշիձեն (1915 թ.) Տ. Չուբինիշվիլին (1916-1917 թթ.) [**30,** էջ 26]:

Նկ. 20. *Անիի արշավախումբը (կենտրոնում՝ Նիկողայոս Մառը)*

Անիի պեղումները շարունակվեցին մինչև 1916 թ.:

Ն. Մառի ծառայություններից է Կովկասում առաջին գիտահետազոտական ինստիտուտի ստեղծումը, որին օժանդակում էր հայ մտավորականությունը՝ ի դեմս Հ. Թումանյանի: Դեռևս 1893 թ. Ն. Մառը առաջարկեց Անիից հայտնաբերված գտածոները պահպանել և ցուցադրել Էջմիածնում հիմնարկվելիք թանգարանում: Սակայն նրա այդ գաղափարը համակրանքի չարժանացավ [**31**], և ստեղծված պայմաններում, հայ մտավորականության և գործարարների հանգանակություններով Ն. Մառը Անիի շենքերից մեկը վերածեց թանգարանի՝ զետեղելով Անիի հնադարանը: Ենթադրվում էր, որ այդ շենքը եղել է Բագրատունի Աշոտ Ողորմած թագավորի պալատը, ոմանց կարծիքով՝ մաքսատունը, որը հետագայում վեր էր ածվել մզկիթի և հայտնի էր «Մանուչեի մզկիթ» անունով: Այսպիսով, պեղումների ընթացքում ստեղծված Անիի հնադարանը բացառիկ և մինչ այդ նախադեպը չունեցող երևույթ էր:



Նկ. 21. *Նիկողայոս Մառն Անիում*

Հետագայում Ն. Մառն Անիում բացեց ևս երկու թանգարան: Սակայն այդ երեք շենքերը բավարար չէին, և նա ցանկանում էր Անին դարձնել Հայաստանի հնագիտական ուսումնասիրությունների կենտրոն: Գիտնականն առաջարկում էր Անիում հիմնել հնագիտության ինստիտուտ, որը պետք է գիտական կենտրոն դառնար ամբողջ Կովկասի և Առաջավոր Ասիայի ուսումնասիրության համար [**32,** էջեր 428-437]:

Սակայն վերահաս Առաջին աշխարհամարտը խափանեց մեծ գիտնականի ծրագրերը: 1920 թ. Անին անցավ Թուրքիային: Քաղաքում մնացած փոքրաքանակ գտածոներին ոչնչացում էր սպառնում: Թուրքական կրակոցների տարափի տակ արշավախմբի անդամ, հնագետ Աշխարհիբեկ Քալանթարը գիշերները կտրում-անցնում էր Ախուրյան գետը, հասնում Անի և «գողանում» գտածոները, որի շնորհիվ Անիի հնադարանի իրերի մի մասը տեղափոխվեց Սանահին: Այսպիսով, կորստից փրկված հնագիտական առարկաները Սանահնում պահվեցին մինչև 1926 թ., որից հետո տեղափոխվեցին Խորհրդային Հայաստանի կուլտուր-պատմական թանգարան (այժմ՝ Հայաստանի պատմության թանգարան) [**33,** էջ 208]:

Մեծ է Անիի պեղումների գիտական նշանակությունը: Ն. Մառը և նրա ղեկավարած հնագիտական արշավախմբի անդամները հրատա-

րակեցին բազմաթիվ մենագրություններ և հոդվածներ. «Անին իբրև հին Հայաստանի մայրաքաղաք» (1898 թ.), «Պեղումներ Անիում» (1904 թ.): Ամենանշանավորները «Անի, քաղաքի պատմությունը, քաղաքատեղիի պեղումները», «Անիի քարանձավները» հետազոտություններն են, Ն. Տոկարսկու՝ «Հայկական ճարտարապետության պատմություն», «Հայկական ճարտարապետության մասին», արշավախմբի լուսանկարիչ Արամ Վրույրի՝ «Անիում» աշխատությունները, Թորոս Թորամանյանի՝ Գագկաշեն եկեղեցուն նվիրված հոդվածները և այլն: Իրենց նեղ մասնագիտացումն ստացան բյուզանդագետ Վ. Բենեշևիչը, ճարտարապետ Յա. Սմիռնովը, արևելագետ Վ. Բարտոլդը, դասական պատմության և հնագիտության մասնագետ Մ. Ռոստովցևը և այլք: Այսպիսով, Բագրատունյաց Հայաստանի մայրաքաղաք Անին առաջին հուշարձանն էր, որի ուսումնասիրությունները դրվեցին գիտական հիմքերի վրա՝ շնորհիվ Ն. Մառի: Անիի հնագիտական դպրոցը մեծ դեր և նշանակություն ունեցավ հայ հնագիտության սկզբնավորման և հետագա զարգացման գործում:

Մեծ գիտնականի գործունեությունում առանձնանում են նաև Դվինի, Գառնիի և Վանի պեղումները: Ինչպես Անիի, այնպես էլ Դվինի (նկ. 22, 23) առաջին գիտական հետազոտությունները պատկանում են Ն. Մառին: Ըստ Պատմահայր Մովսես Խորենացու և Փավստոս Բուզանդի՝ քաղաքը հիմնադրել է հայոց արքա Խոսրով Բ Կոտակ Արշակունի (330-338 թթ.) արքան, որը հայոց արքունիքը Արտաշատից տեղափոխում է Դվին՝ դարձնելով Հայաստանի մայրաքաղաք: Դվինն այն բացառիկ ու բազմաշերտ հուշարձաններից է, որտեղ մարդն իր գործունեությունն է ծավալել դեռևս վաղ բրոնզի դարից (Ք. ա. IV հազարամյակի կես), որոշակի ընդհատումներով շարունակել մինչև ուշ միջնադար (XIV դ.):

Նկ. 22.

Նկ. 23. *Տեսարաններ Դվին մայրաքաղաքից (լուսանկարները՝ Կորյուն Ղաֆադարյանի անձնական արխիվից)*

Ն. Մառը Դվինում եղել է երկու անգամ. 1893 և 1899 թթ. [**6,** էջ 91]: Կայսերական ընկերությունը նրան հանձնարարել էր գտնել Արտաշատը, սակայն Ն. Մառն սկսեց Դվինի պեղումները, որի մասին անտեղյակ էր նույնիսկ ինքը: Նրան այդպես էլ չհաջողվեց որոշել հնավայրն Արտաշատն է՞, թե՞ Դվինը: Պարզ էր միայն, որ հուշարձանը միջնադարյան է:

XIX դ. հնախույզների շրջանում մեծ էր հետաքրքրությունը Գառնիի նկատմամբ: XX դարասկզբին հնավայրի տարածքը պատկանում էր Գայլ Վահան անունով գյուղացու [**34**, էջ 120]: Ն. Մառին հաջողվեց գնել այն, և 1909 թ. ամռանը Պետերբուրգի Հնագիտական ընկերության միջոցներով սկսեց պեղումները: Արշավախմբում էր ճարտարապետ Յա. Սմիռնովը, ով օգնում էր չափագրություններ և հատակագծեր կազմելու գործում: Երեքշաբաթյա պեղումները կենտրոնացված էր, հիմնականում Գառնիի՝ այսպես կոչված *«հուխանց»-ի* (տաճար) տարածքում: Յա. Սմիռնովը տաճարը թվագրում էր Ք. հ. II դ. առաջին կեսով, Բ. Ֆարմակովսկին և Բ. Ռոստովցևը՝ II դ. վերջ-III դ. սկզբով: Իրականում, Ք. հ. I դ., Տրդատ Ա (66-88 թթ.) Արշակունու օրոք, հունա-հռոմեական ոճով կառուցված, հայոց հեթանոսական արևի աստված Միհրին նվիրված տաճարը կանգուն էր ողջ միջնադարում. կործանվել է 1679 թ. ուժեղ երկրաշարժից:

Տաճարի կողքին բացվեցին նաև վաղքրիստոնեական՝ VII դ. Ներսես Գ կաթողիկոսի կառուցած «զվարթնոցատիպ» եկեղեցու հիմքեր (նկ. 24): Ինչպես Ն. Մառը և Յա. Սմիռնովը, այնպես էլ այլ հետազոտողներ, համոզված էին, որ հեթանոսական տաճարի քանդակների բազմաթիվ մասեր խնամքով ոչնչացվել են՝ հեթանոսության հետքերը ջնջելու համար [**35**, էջ 164]:

Նկ. 24. *Տաճարի արևմտյան կողմում բացված «զվարթնոցատիպ» եկեղեցին*

Ն. Մառի արշավախմբի կարևոր հայտնագործություններից է Գառնիի մոտակա լեռներում փաստագրված, մինչև 5 մ երկարությամբ, իր բնորոշմամբ՝ *քարե ձկներ,* որոնց ժողովուրդն անվանում է «վիշապներ». գիտական գրականությունում հայտնի են նաև վիշապաքարեր, վիշապակոթողներ անուններով: Ուսումնասիրությունների արդյունքը Ն. Մառի և Յա. Սմիռնովի «Վիշապներ» աշխատությունն է:

1909 թ. Գեղամա լեռների «Աժդահա յուրտ» տեղանքից նրա հայտնաբերած վիշապակոթողներից մեկը [**36,** էջ 62] 1970-ական թվականներին տեղափոխվել է ՀՀ Արմավիրի մարզ և տեղադրվել Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի բակում՝ բացօթյա ցուցադրություն կազմակերպելու նպատակով (նկ. 25): Բազալտակերտ վիշապաքարն ունի 285 սմ բարձրություն, 60 սմ լայնություն և 45 սմ հաստություն: Քարի դիմերեսին ցլի ռելիեֆ գլխաքանդակն է: Հստակ երևում են աչքերը և գլխից սկիզբ առնող խոյագլուխները: Ցլաքանդակի վերնամասում, դեմ դիմաց օձերի պատկերներ են քանդակված [**37,** էջեր 62-63]: Ստորին մասում հասակով մեկ կանգնած մարդու պատկերաքանդակ է, որից ներքև հողմահարված ինչ-որ քանդակներ են նշմարվում:

Նկ. 25. *Սարդարապատի թանգարանի բակի վիշապաքարը*

Առաջին աշխարհամարտի ժամանակ ռուսական զորքերն ազատագրելով հայկական հողերը, նպաստավոր պայմաններ ստեղծեցին պեղումներ իրականացնելու նաև Վանի շրջանում: Վանի նկատմամբ հետաքրքրությունը մեծացել էր 1870-1880 թթ.՝ եվրոպացի հնագետներ Վ. Բելքի, Կ. Լեհման-Հաուպտի, Հ. Ռասսամի, Է. Քլեյթոնի և այլոց ուսումնասիրությունների շնորհիվ:

1916 թ. Ն. Մառի արշավախումբը մեկնեց Վան: Պեղումները կենտրոնացվեցին Վանի ժայռի արևմտյան մասում, որտեղ բացվեցին երկու, Ն. Մառի բնորոշմամբ՝ *«միջնորմ պատեր»* (վիմախորշ, նկ. 26) [**38**, էջ 7]: Տեղի հայերն այդ կոթողներն անվանում էին «Կռատունք» (կռապաշտների տուն) կամ «Զոհարան»: Վիմախորշերից մեկում հայտնաբերվեց Վանի Սարդուր Բ (Ք. ա. 764-735 թթ.) արքայի արձանագրությունը (Սարդուրյան տարեգրություն, նկ. 27) [**39**, էջ 112]: Ն. Մառը Վանի շրջակայքում գտել է ուրարտերեն մեծաքանակ սեպագրեր և փորձել վերծանել դրանք:

Այնուհետև պեղումները տեղափոխվել են «Սև քարեր» կոչվող ժայռոտ բլուրները: Շրջակայքում բացվել է մեծ ժայռ՝ կենտրոնում փորված քարայրով, որն, ըստ Ն. Մառի՝ ուրարտական ժայռափոր տաճար էր: Քարե դահլիճի վերին մասում ամբիոնանման հարթակ էր՝ վրան քարե գահավորակ, երկու կողմում, պատերի տակ՝ միակտոր քարե նստարաններ [**40**, էջ 445]: Ն. Մառի նպատակն էր որոշել շինությունների կառուցման սկզբունքները և ստեղծել դրանց հատակագծերը: Դա նրան չհաջողվեց, քանզի նախորդ հնագետները պարզապես ավերել էին դրանց հիմքերը:

Նկ. 26. *Վանի ժայռի արևմտյան մասի երկու վիմախորշը*

Նկ. 27. *Սարդուրյան տարեգրությունը*

Անցնելով Վասպուրականի վերին մաս՝ Հայոց ձոր գավառի Աստվածաշեն գյուղը, Ն. Մառը լուսանկարեց Հայկաբերդը (Բոլ-դաղ, նկ. 28-29) և կազմեց հատակագիծը, քանզի պատերազմը խանգարեց հետագա որոնումներին:

Նկ. 28. *Հայկաբերդի «կիկլոպյան» պարիսպները (լուսանկարը՝ հնագետ Հակոբ Սիմոնյանի)*

Նկ. 29. *Տեսարան Հայկաբերդից*

Վանում և շրջակայքում Ն. Մառը հավաքել էր նաև հայերեն ու արաբերեն մեծաքանակ ձեռագրեր, ազգագրական և հնագիտական իրեր՝ տնային ու կենցաղային առարկաներ, տարազ, զարդեր, տպագիր հազվագյուտ մատյաններ [**41**, էջեր 533-534]: Անվանի գիտնականը նպատակադրվել էր այդտեղ հիմնադրել թանգարան-հնադարան: Այդ երազանքը նույնպես մնաց անիրագործելի. ռուսական զորքերը շուտով հեռացան Արևմտյան Հայաստանից, և Վանը կրկին անցավ Թուրքիային: Նա հնագիտական և ազգագրական նյութերը Վանից տեղափոխեց Կովկաս, այնտեղից՝ Պետերբուրգի թանգարան:

Ն. Մառի ուսումնասիրությունների աշխարհագրությունն ընդգրկում է Հայաստանի Հանրապետության Արարատի, Արմավիրի, Արագածոտնի, Կոտայքի, Շիրակի և Լոռու մարզերը: Հետազոտություններ են կատարվել նաև պատմական Հայաստանում, մասնավորապես՝ Վանա լճի ավազանում և Նախիջևանում: Գիտնականի հետազոտած երեք տասնյակ հուշարձաններից են միջնադարյան Հայաստանի երբեմնի մայրաքաղաքներ Արմավիրը, Երվանդաշատը, Դվինը, Շիրակավանը, Անին, Լոռի-բերդը, ինչպես նաև Գառնին և այլն: Ն. Մառի շնորհիվ հնագիտական հետազոտությունները դրվեցին գիտական հիմքերի վրա: Ի տարբերություն համաժամանակյա այլ հետազոտողների՝ Ն. Մառի արշավախմբերը տարբերվում էին գիտական կազմով. ներառված էին հնագետներ, ճարտարապետներ, լուսանկարիչներ և այլք: Նրա աշակերտներ Ն. Ադոնցը, Հ. Օրբելին, Ի. Ջավախիշվիլին, Ի. Մեշչանինովը, Գր. Ղափանցյանը, Վ. Աբաևը և այլք նպաստել են գիտության տարբեր բնագավառների զարգացմանը:

Նույնքան հնագետ էր, պատմաբան, որքան լեզվաբան ու բանասեր: Ն. Մառը աշակերտելով Պետերբուրգի համալսարանի կովկասագիտության հենապյուներ Ք. Պատկանյանին ու Ա. Ցագարելուն, գերազանցեց իր ուսուցիչներին, գիտության այդ բնագավառը Ռուսաստանում բարձրացնելով մի նոր աստիճանի: Նրան հետաքրքրել են կովկասյան ժողովուրդների լեզվի, պատմության, գրականության, արվեստի, հնագիտության, ազգագրության, բանահյուսության բազմաթիվ հարցերը: Այդ բնագավառներում նրա կազմած և տարբեր՝ լեզվաբանական, ազգագրական, վիմագրագիտական, աղբյուրագիտական հիմնահարցեր արծարծող ձեռնարկները, հոդվածները, մենագրությունները գիտական և գործնական մեծ արժեք են ներկայացնում [**42**, էջ 127]:

Գիտելիքների մեծ և հսկայական պաշարով զինված, մեծ տաղանդով և աշխատասիրությամբ օժտված ականավոր այդ գիտնականը ստեղծագործեց 46 տարի՝ թողնելով 500-ից ավել գիտական աշխատանք և մեծ քանակությամբ փաստական նյութ:

Եզրակացություն

XIX դ. ռուսական հնագիտական արշավախմբերը մշտապես աչքի են ընկել գիտական կադրերով, կազմակերպվածությամբ և հայերի ներգրավվածությամբ: Ռուսական Կայսերական հնագիտական հանձնաժողովի շնորհիվ դրանց

տրվեցին գիտական տեսք և պետական հովանավորչություն՝ կանխելով ցանկացած ինքնակամ գործունեություն: Ասվածի վառ օրինակը յուրաքանչյուր պեղումներից և ուսումնասիրություններից հետո հնագետների հաշվետվությունների ներկայացումն էր Ռուսական Կայսերական հանձնաժողովներին: Նրանցից շատերը նույնիսկ հանդես էին գալիս զեկույցներով և քննարկումներով:

Ռուսական արշավախմբերում մշտապես ներգրավված էին հայեր, որոնցից շատերը՝ (Հ. Օրբելի, Ն. Ադոնց, Ա. Քալանթար, Ն. Ադոնց և այլք), շփվելով ռուսական իրականության հետ և ուսումնառություն ստանալով Ռուսաստանի համալսարաններում, դարձան անվանի գիտնականներ: Հայաստանի խորհրդայնացումից հետո, Ռուսական հնագիտական դպրոցի հենքի վրա ստեղծվեցին գիտահետազոտական գիտահետազոտական ինստիտուտներ, հնագիտական աշխատանքներ կազմակերպող ու ղեկավարող մարմիններ, հաստատություններ, պետական հովանավորություն: Այդ տեսանկյունից ռուս մասնագետների հետազոտությունները գործուն ազդեցություն ունեցան խորհրդահայ հնագիտության ստեղծման գործում՝ հիմնված XIX դ. ավանդույթների վրա:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Ծերեթյան Կ.,** Հայ վիմագրագիտության և դրամագիտության սկզբնավորումը. օտարազգի և հայ գիտնականների հավաքչական գործունեությունը Հայաստանում (XIX դ. երկրորդ կեսից մինչև XX դ. 20-ական թթ.); // «Հուշարձան» տարեգիրք, հ. ԺԱ, «Հուշարձան» հրատարակչություն, Երևան, 2016, 86-110:
2. **Ծերեթյան Կ.,** Արագածոտնի մարզի Ապարանի ենթատարածքի XIX-XX դդ. եկեղեցիները; «Հուշարձան» գիտական հանդես, 1 (ԺԹ), «Հուշարձան» հրատարակչություն, Երևան, 2023, 113-114:
3. Материалы по археологии Кавказа. – Москва, 1916, выпуск 13, С. 1-37.
4. **Ղաֆադարյան Կ.,** Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն: – Երևան 1957, 72:
5. **Շահնազարյան Կ.,** Հայկական հին դրամ արծաթի՝ արքայից-արքա Արտավազդայ Ա Արշակունվոյ, Արշալույս Արարատեան; Զմյուռնիա, 1851, N 386, 1-2:
6. Эриванская губерния, Отчет археологической императорской комиссии за 1899 г. – Санктпетербург, 1902, С. 91.
7. Материалы по археологии Кавказа. – Москва, 1896, том V, С. 133.
8. **Կարապետյան Ս.,** Կովկասյան թանգարանի հայկական հավաքածուն; գիրք Է, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն: – Երևան, 2004, 10:
9. **Համբո,** Հինգերորդ հնագիտական ժողովը Թիֆլիսում; Փորձ, Տպարան Энтиаджиана И. К., խմբագիր-հրատարակիչ Արգար Հովհաննիսյան: – Տփղիս, 1881, N 1, 76; 80:
10. **Ծերեթյան Կ.,** Հայ հնագիտության սկզբնավորումը. ռուս հետազոտողների գործունեությունը Հայաստանում (XIX դ. երկրորդ կեսից մինչև XX դ. 20-ական թթ.); «Հուշարձան» տարեգիրք, հ. Ը, «Հուշարձան» հրատարակչություն: – Երևան, 2014, 127-138:
11. **Հովհաննիսյան Խ.,** Բևեռագիր արձանագրություններ Ռուսաց Հայաստանում; Բազմավէպ, Օրգան Վենետիկի Մխիթարյան միաբանության: – Վենետիկ, տպարան Սուրբ Ղազար, 1897, N 5, 203:
12. **Տիրացյան Գ.,** Արմավիրի պեղումները; // Պատմա-բանասիրական հանդես, 1980, N 2, 26:
13. **Ղափանցեան Գ.,** Հնութեան մի քանի յիշատակարաններ; // Արարատ, Հայրապետական Մայր աթոռ սուրբ Էջմիածին, – Վաղարշապատ Տպարան Մայր աթոռ սուրբ Էջմիածին, , 1914, N 1, 92; 95:
14. **Դադյան Խ.,** Հոդված «Յովիտ» ամսագրից՝ կոմսուհի Ուվարովայի տանը տեղի ունեցած Մոսկվայի հնագիտական ընկերության նիստում Գառնիի մասին արված զեկուցման մասին; Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 319, ց. 1, գ. 360, 1901-1910, 1:
15. Материалы по археологии Кавказа. – Москва, 1911, выпуск VI, С. 37-38; 86; 90-99; 135.
16. **Погребова М.,** История Восточного Закавказья: Вторая половина II-начало I тыс. до н. э., Издательская фирма «Восточная литература» РАН, – Москва, 2011, С. 156.
17. Раскопки в Елизаветпольской губернии, Отчет археологической императорской комисси за 1891 г., – Санктпетербург, 1893, С. 117-118.
18. **Пиотровский Б.,** Археология Закавказья. – Ленинград, Издательство Ленинградского государственного ордена Ленина университета им. А. А. Жданова, 1949, С. 48.
19. **Есаян С.,** Армения и русские археологи, Академия наук Армянской ССР, Сектор научной информации по общественным наукам, Научно-информационный бюллетень, Научно-аналитический обзор, Ереван, 1977, серия IУ, С. 13.
20. **Есаян С.,** Ереван. Археологический очерк, Музей истории гор. Еревана. – Ереван, Издательство «Айастан»,1969, С. 30-31.
21. Эриванская губерния; Отчет археологической императорской комиссии за 1897 г., – Санктпетербург, 1900, С. 83.
22. **Чарквиани М.,** Ефимий Такайшвили и грузинская археология рубежа XIX-XX веков; автореферат; – Тбилиси, 2004, С. 46-47; 51.
23. **Баликян О.,** Доклад И. Орбели об Ахтамарском храме; // Вестник, – Ереван, Изательство академии наук Армянской ССР, 1980, N 7, С. 100.
24. **Եսայան Ս., Քիլիմջյան Գ.,** Հայկաբերդ ամրոցը, // Լրաբեր հասարակական գիտությունների, 1991, N 6, 102-103:

25. **Ծերեթյան Կ.,** Մեր երախտավորները. Նիկողայոս Մառի հնագիտական գործունեությունը Հայաստանում; «Հուշարձան» տարեգիրք, հ. Է, «Հուշարձան» հրատարակչություն, Երևան, 2011, 143-152:
26. Раскопки в Эриванской губернии; Отчет археологической императорской комиссии за 1892 г., Санктпетербург, 1894, С. 84; 86.
27. **Хачатрян Т.,** Из истории изучения древнейших памятников склонов горы Арагац; Арменоведческие исследования, выпуск I, Издательство Академии наук Армянской ССР, Ереван; 1974, С. 88-99.
28. Раскопки в Эриванской губернии; Отчет археологической императорской комиссии за 1893 г., – Санктпетербург, 1895, С. 35.
29. **Մառ Ն.,** Անի. հին Հայաստանի մայրաքաղաքը; Բազմավէպ, Օրգան Վենետիկի Մխիթարյան միաբանության, Ի տպարան Սրբոյն Ղազարու, հ. ԾԷ, N 2, – Վենետիկ, 1899, 73-75:
30. **Պապուխյան Ն.,** Թորոս Թորամանյան. կյանքն ու գործը, «Լուսակն» հրատարակչություն, – Երևան, 2005, 26:
31. **Орбели И.,** Каталог анийского музея древностей, Анийская серия, N 3, Санктпетербург, 1910.
32. Պրոֆ. Ն. Մառի թուղթը Անիում հնագիտական ինստիտուտ հիմնելու համար, // «Արարատ», ԽԳ տարի, Համար Ե, Սուրբ Էջմիածին, 1910, 428-437:
33. **Ղաֆադարյան Կ.,** Հայաստանի պետական պատմական թանգարանը, // Պատմա-բանասիրական հանդես, N 2, 1962, 208:
34. **Հովսեփյան Գ.,** Գառնիի ավերակները; Յովիտ, Տպարան Էկոնոմիա, խմբագիր-հրատարակիչ Եզնիկ ավագ քհյ. Երզնկյանց, N 8, Թիֆլիս, 1910, 120:
35. Հնագիտական պեղումներ Հայաստանում; Արօր, Տպարան Էποxa, խմբագիր-հրատարակիչ Հ. Առաքելյան, Թիֆլիս, 1910, N 1, 164:
36. **Марр Н., Смирнов Я.,** Вишапы, Труды государственной академии истории материальной культуры, – Ленинград, т. 1, 1931, С. 62.
37. **Ծերեթյան Կ.,** ՀՀ Արմավիրի մարզի պատմամշակութային ժառանգությունը (Վաղ բրոնզից մինչև միջին բրոնզի դարաշրջաններ); // «Հուշարձան» գիտական հանդես, ԻԲ 2 (22), «Հուշարձան» հրատարակչություն, Երևան, 2024, 62-63:
38. **Марр Н. и Орбели И.,** Археологическая экспедиция 1916 года в Ван; Академическая типография, Петербург, 1922, С. 7.
39. **Գրեկյան Ե.,** «Սարդուրյան տարեգրության» կառուցվածքը և ժամանակագրական որոշ հարցեր, Պատմամշակութային ժառանգություն, Գիտական հոդվածների ժողովածու, IV, «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ, Երևան, 2023, 112:
40. **Ամեմյան Հ.,** Պրոֆ. Ն. Մառի պեղումները Վանում; // Հանդէս ամսօրեայ, Հրատարակիչ-օրգան Մխիթարյան միաբանության, ԼԸ տարի, Վիեննա, N 9-10, 1924, 445:
41. **Ամեմյան Հ.,** Պրոֆ. Ն. Մառի պեղումները Վանում; // Հանդէս ամսօրեայ, Հրատարակիչ-օրգան Մխիթարյան միաբանության, ԼԸ տարի, N 11-12, Վիեննա, 1924, 533-534:
42. **Առաքելյան Բ.,** Նիկողայոս Մառ (ծննդյան 100-ամյակի առթիվ), // Պատմա-բանասիրական հանդես, 1965, N 1, 127:

Сдана / Հանձնվել է՝ 03.10.2026
Рецензирована / Գրախոսվել է՝ 09.10.2026
Принята / Ընդունվել է՝ 16.10.2026